



# Սայաթ Նովա

## Էշխը վառ կրակ

Ղափիա էսպես աշուղ օղլանի օգութլամա.  
Արութինի ասաժ. լավն է:

Էշխը վառ կրակ է Էրվելով գու քա,  
Շատ մարթ կոսն՝ յիս յարի յիդ ման գու քամ.  
Էս դարդենն օվ չէ քաշի՝ վո՛ւչ քաշե,  
Օվ յար սիրե, է՛լ չասե թե՛ ջան գու քամ:

Շատ մարթ կա՝ է՛ն գըլխեն սըրտում ունե դամ.  
Բագի մարթ չէ քաշի, Էշխենն է խամ.  
Ինչ ասիս կոնիյ տա՝ սերն է անըսկամ.  
Հալվեցա, մաշվեցա, էլ ի՛նչ ջան գու քամ:

Էշխը վուր կա՝ հագար բաբաթ հանգ ունե,  
Ուշկ ու միտկը կու քընեցնե՝ բանգ ունե.  
Բըռնաժը չի թողնի՝ դայիմ չանգ ունե,  
Էնդու համա՝ խան յիդ կեհամ, խան գու քամ:

Թե դուն Էշխի հիդ ման գալը հարցընիս  
Չի դիմանա Բոստում Ջալը՝ հարցընիս.  
Թե բեմուրվաթ յարի հալը հարցընիս,  
Ասում է թե՛ սուլթան գու քամ, խան գու քամ:

Սայաթ Նովեն ասաց՝ շատի ջանք դրի,  
Մե բափա չը տեսա հում կաթնակիրի.  
Օվ օր ինձ չի սիրի՝ յիս էլ չիմ սիրի,  
Մերը սեր կու բերե՝ սիրեկան գու քամ: